ՀԱՂԲԱՏԻ ՄԵԾ ԴԱՎԻԹԸ

Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաղբատավանքը, Հայաստանի կանգուն մնացած նշանավոր համակառույցներից մեկը, հարուստ է ճարտարապետական կոթողներով, որոնք չափագրել է Հովհաննես Հակոբյանի ղեկավարությամբ աշխատող ճարտարապետների խումբը 1947—1948 թթ.։

Հաղբատավանքի գլխավոր և ամենահին հուշարձանն է ս. Նշան եկեղեցին. նրա կառուցումն սկսվել է վանքի հիմնադրման օրից՝ 976 թ., Խոսրովանուշ թագուհու նախաձեռնությամբ։ Տաճարի կառուցումը ավարտվել է 991 թ.[1]։ Մի շարք գիտնականներ գտնում են, որ կառուցողն է նշանավոր ճարտարապետ Տրդատը։ Այդ եկեղեցու դավիթը, կամ ժամատունը, հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկն է, որի մասին մեծ հիացմունքով են խոսել հին պատմիչները։ Դավթի կառուցման ժամանակի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ։ Վ. Հարությունյանի և Ս. Սաֆարյանի կարծիքով այն կառուցվել է 1201 թ., իսկ ըստ Ս. Մնացականյանի՝ «Հաղբատավանքի դավիթը կառուցել է վանքի վանահայր Հովհաննես Խաչենցին, որը այդ պաշտոնին է անցել 1209 թ.։ 1221 թ. արձանագրությունում Հովհաննեսը արդեն հիշատակում է իր կառուցած դավթի մասին»։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը նշում է, որ դավիթը սկսել է կառուցվել 1208 թ., Հովհաննես Խաչենցու առաջնորդության տարիներին, ավարտվել է 1210-ական թթ. և կառուցող ճարտարապետի անունն անհայտ է[2]։

Մեծ դավիթը կից է ս. Նշան եկեղեցու արևմտյան պատին։ Ինչպես ցույց են տալիս Կ. Ղաֆադարյանի ուսումնասիրությունները, «այս ժամատան տեղում սկզբնապես կառուցված է եղել մի դավիթ, իբրև տոհմական տապանատուն Կյուրիկյան թագավորական տան անդամների համար, որ հետո վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենցին քանդել և նրա տեղը կառուցել է այժմ գոյություն ունեցող մեծ ժամատունը»[3]։ «Փոքրագույն դավիթը կամ Կյուրիկյան տոհմի տապանատունը կառուցված է եղել Կյուրիկե III թագավորի դուստր Մարիամի հրամանով»[4]։ «Անվիճելիորեն մարիամաշեն հին դավթին են պատկանում մեծ ժամատան դեպի հարավ և հյուսիս դուրս շեշտված մասերը երկկամար մուտքերի բացվածքով, որոնք մինչև կամարներն այժմ շարված են սրբատաշ քիչ դեպի դուրս ընկած պատերով։ Միայն վերին կամարներն են, որ չեն շարվել և հին ժամանակներից ի վեր բաց են մնացել, իսկ կամարների կենտրոնի սյուները մնացել են մեծ ժամատունը շինելու ժամանակ շարված

---

1 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 15։

2 В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, էջ 57; С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, էջ 79, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 15։

3 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 26։

4 Նույն տեղում։

պատերի մեջ»[5] (նկ. 1)։ Փոքր գավիթը կամ փոքր ժամատունը գտնվում է գլխավոր եկեղեցու ու Համագասպի կառուցած ժամատան միջև առաջացած միջանցքում։ Կառուցված է Հովհաննես առաջնորդի նախաձեռնությամբ մինչև 1279 թ.[6]։



Նկ. 1. Գլխավոր եկեղեցու և մեծ գավթի հատակագիծը։ 1. ս. Նշան եկեղեցին, 2. Մեծ գավիթը. 3. Մարիամաշեն տապանատունը, 4. «Օթյակի» պատը, 5. Ավանդատուն։ Սլաքներով ցույց են տրված ապդող ճիգերի ուղղությունները։

Մեծ գավիթը հատակագծում ուղղանկյուն է՝ 15,3×16,9 մ ներքին չափերով (չհաշված մարիամաշեն տապանատները), ձգված արևելքից արևմուտք, երեք կողմից շրջապատված է պատերով։ Արևելյան կողմում պատը փոխարինված է որմնամույթերով, որոնք հպված են ս. Նշան եկեղեցու պատին։ Որմնամույթերը միացնող կամարների վրա շարված է պատի վերին մասը։ Հյուսիսային և հարավային պատերը մեծ բացվածքներով միացված են մարիամաշեն տապանատներից մնացած թաղածածկ մասերին։ Արևմտյան պատից մոտ 4,30 մ հեռավորության վրա տեղադրված են երկու սյուներ։ Գավթի արևելյան մասը՝ սյուներից մինչև ս. Նշան եկեղեցու պատը, ծածկված է հատվող կամարներով, իսկ արևմտյան մասը՝ սովորական կամարային կառուցվածքներով։

Գավթի հատվող կամարներով ծածկի արևելքից արևմուտք ձգված դույգ կամարները մի կողմում հենվում են ս. Նշան եկեղեցուն կից կառուցված որմնասյուներին, իսկ արևմտյան կողմում՝ դույգ սյուներին։ Այս կամարների մաքուր թռիչքը հավասար է մոտ 12,0 մ։ Հարավից հյուսիս ձգված դույգ կամարները հենվում են Մարիամաշեն գավթի երկայնական պատերին կցված որմնասյուների վրա։ Այս ուղղությամբ կամարների մաքուր թռիչքը հավա-

5 Նույն տեղում, էջ 29։
6 Նույն տեղում, էջ 46։

սար է մոտ 13,0 մ։ Արևելքից արևմուտք ձգված գլխավոր կամարները հենվում են ս. Նշան եկեղեցու պատին կցված որմնասյուներին և սյուներին, տարբեր բարձրությունների վրա։ Նիշերի տարբերությունը կազմում է 3,5 մ։ Հատվող կամարներով առաջացած միջին քառակուսին ծածկված է գմբեթով, որը նույնպես նստած է հատվող կամարների վրա, իսկ հատման տեղում գտնվում է երդիկը՝ վեց սյուների վրա հենված գմբեթով, որը արտաքինից կոնաձև է։

Գավիթը կառուցող ճարտարապետը մեծ հմտությամբ օգտագործել է տեղում գոյություն ունեցող շենքերը՝ ս. Նշան եկեղեցին և Մարիամաշեն դավթի երկու ծայրամասերը, ստեղծելով ճարտարապետական տեսակետից համարձակ մի կոթող։ Գավիթը ունի գրեթե նույն երկարությունը ինչ եկեղեցին, բայց բավական լայն է նրանից և իր արևելյան կողմի թևերով, որտեղ տեղադրված են երկհարկ ավանդատներ, գրկում է նրան։ Հարավից դեպի հյուսիս ձգված 13 մ թռիչք ունեցող կամարները հենվում են որմնասյուների վրա, որոնք կցված են Մարիամաշեն դավթի երկու զույգ կոշտ երկայնական պատերին (նկ. 2)։ Արևելքից արևմուտք ուղղված զույգ կամարների հրող ճիգերը մի կողմից հաղորդվում են արևմտյան կողմում տեղադրված զույգ սյուներին (որոնք կամարներով և նրանց վրա եկած ծածկով միացված են արևմտյան որմնասյուներով ուժեղացված պատին, կազմելով մի կոշտ հենարան), իսկ արևելյան կողմից՝ ս. Նշան եկեղեցու պատերին կցված որմնասյուներին։ Գավթի որմնասյունները և ս. Նշան եկեղեցու պատը, համատեղ, մոտ 6 մ բարձրության վրա, վերցնում են կամարների հրող ճիգերը։ Ճարտարապետը, ցանկանալով այս հենարաններին էլ մեծ կոշտություն հաղորդել, ս. Նշան եկեղեցու արևմտյան պատի որմնասյունները պատերով միացրել է գմբեթակիր հզոր որմնասյուներին, ստեղծելով մի ապահով սիստեմ (նկ. 3)։



Նկ. 2. Մեծ գավթի և Մարիամաշեն տապանատների կտրվածքը հյուսիսից հարավ։

Կ. Ղաֆադարյանը գրում է. «Արևմտյան կողմի զույգ ավանդատների վերին հարկերի միմյանց նայող հարավային և հյուսիսային պատերը բաց են և, ըստ երևույթին, ծառայել են Կյուրիկյան տան անդամներին իբրև արքայական օթյակ»[7]։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ավանդատները և վերին հարկի «օթյակները» կառուցված են հետագայում, որովհետև նրանց պատերը որմնասյուներից բաժանված են շինարարական կարաններով և նրանց հետ մի միասնություն չեն կազմում։ Այս «օթյակները» կարելի է բարձրանալ միայն փայտե շարժական ելարաններով և, վերջապես, այդ օթյակներից հնարավոր չէ դիտել սեղանի վրա կատարվող արարողությունը։ Այսպիսով, օթյակների պատերը կառուցված են դավթի կամարներից առաջացած հրող ճիգերի ազդեցությունը վերարաշխելու նպատակով, իսկ այդ միջո-

[7] Նույն տեղում, էջ 19։

ցառումից ստացված երկհարկ սենյակները օգտագործվել են եկեղեցու կարիքների համար։ Մարիամաշեն գավթի՝ անհրաժեշտ համարված մասերի օգտագործումը այս մեծ ճարտարապետին հնարավորություն է տվել ստեղծել տարբեր թռիչքի և տարբեր բարձրությունների վրա հենված կամարներ, որոնց շնորհիվ հատման տեղում առաջացած գմբեթի կենտրոնը մոտ 1 մետրի չափ մոտեցել է ս. Նշան եկեղեցու պատին, շեշտելով այն։



Նկ. 3. Գլխավոր եկեղեցու և մեծ գավթի երկայնական կտրվածքը արևմուտքից արևելք։

Հատվող կամարները կազմված են երկու քարից և ունեն Т-աձև կտրվածք։ Ինչպես ընդունված է հայկական ճարտարապետության մեջ, սրբատաշ քարերից կառուցված կամարների առաջին շարքի քարերը տեղադրվում էին առանց շաղախի։ Միակողմանի մեծ բեռնվածության կամ երկրաշարժային ճիգերի ազդեցության տակ այսպիսի կամարը չի կարող աշխատել, որովհետև նրանում առաջացող ձգող լարումներից կքանդվի։ Վարպետները իրենց երկարամյա աշխատանքի և բազմադարյան շինարարական փորձի հիման վրա քարի կամարները, թաղերը և այլ կառույցները վերևից ծածկում էին կրաբետոնի շերտով, որը իրար միացնելով շենքի մասերը, կարող էր աշխատել ձգման ճիգերի տակ։ Ինչպես երևում է գծագրից, գավթի կամարների երկրորդ շարքը հնարավորություն է տվել ուժեղացնել կամարի կտրվածքը, կրաբետոնի շերտին տալով Т-ի ձև (նկ. 4)։ Երդիկի մասում կամարները միաշերտ են, բայց ուժեղացված են շատ կոշտ պատերով, որոնք տեղադրված են կամարների վրա և գմբեթն են կազմում։

Ս. Մնացականյանը իր մենագրությունում, որտեղ ուսումնասիրված է հայկական գավիթների ճարտարապետությունը, գրում է. «Բացի մի քանի փոքր գավիթներից (Հոռոմայր, Ցախացքար), առանց բացառության բոլոր գավիթները կոնստրուկտիվ կապ չունեն այն եկեղեցիների շենքերի հետ, որոնց

նրանք կցված են»[8]։ Ապա նա եզրակացնում է, թե դա դրսևորումն է հայ վարպետների հակաերկրաշարժային շինարարության դարավոր փորձի, որն «իրագործվել է սրամիտ կոնստրուկտիվ մեթոդներով և ձևերով»[9]։ Հեղինակի այսպիսի դրվածքի հետ չի կարելի համաձայնվել։ Գրքում բերված գրեթե բոլոր օրինակներում գավիթները կցված են եկեղեցիներին, ճիշտ է առանց կոնստրուկտիվ կապերի, բայց կառուցված են ընդհուպ, առանց հակաերկրաշարժային կարանների։ Եթե ուշադրությամբ դիտենք այդ կառուցվածքները, որոնց թվում և Հաղբատի մեծ գավիթը, ապա կտեսնենք, որ կցման տեղում դրված տարրերը (որմնասյուները, կամարները, պատերը), փոքր չափեր ունենալով, չէին կարող կրել իրենց վրա եկած բեռները, եթե հենված չլինեին եկեղեցիներին և կապված չլինեին շաղախի շերտով։ Գավիթները եկեղեցիներին կցելով, վարպետները կրճատել են շինարարական աշխատանքների ծավալը և արժեքը։ Այս ձևով են արված միջնադարյան մի շարք համալիրների կառուցվածքները, որտեղ մի շենքի պատը օգտագործված է կից շենքի համար որպես հենարան։



Նկ. 4. Կամարի կտրվածքը։
1. Կրաբետոն, 2. Քար

Հ. Խալփախչյանը, խոսելով Սանահինի կամարակապ սրահի մասին, որը գտնվում է Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների միջև, գրում է. «Տաշիր Զորագետի բարձր երկրաշարժայնությունը, որը Մերկալի—Կանկանիի աստիճանացույցով հավասար է 5,5—6,5 բալի, հաճախ պատճառ է դարձել աղետալի կործանումների (օրինակ, 1139 թ. Հաղբատում երկրաշարժից քանդվել էր տաճարի գմբեթը)։ Ճեմարանի կամարները, մի ծավալային տարածական հորինվածքում միավորելով Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիները, այդ կառուցվածքներից յուրաքանչյուրին ստիպում են ստորերկրյա հարվածը ընդունել ոչ թե առանձին-առանձին, այլ խմբի կազմում, որի շնորհիվ զգալիորեն մեծանում է նրանց երկրաշարժակայունությունը»[10]։

Հակաերկրաշարժային տեսակետից սրահը կկատարի միայն բացասական դեր։ Երկրաշարժի դեպքում կվնասվի ինքը և կվնասի կից շենքերը, կատարելով խոյահարի (таран) դեր։ Ինչ վերաբերում է Մերկալի—Կանկանիի աղյուսակով 5,5—6,5 բալի երկրաշարժերին, ապա դրանք կործանիչ չեն։ Կառուցվածքներում սովորաբար հաշվի են առնվում 7 բալ և ավելի հզորության երկրաշարժերը։ Իրավացի է Կ. Ղաֆադարյանը, երբ խոսելով 1139 թ. երկրաշարժի մասին, գրում է. «Դրանից հետևեցնում ենք, որ վնասն այնքան էլ մեծ չի եղել, և Սամուել Անեցին մի քիչ չափազանցության մեջ է ընկել»։ Ապա նա եզրակացնում է. «Վիմական արձանագրությունների ու մատենագիտական վկա-

---

[8] С. Мнацаканян, Архитектура армянских притворов, էջ 34։

[9] Նույն տեղում, էջ 35։

[10] О. Халпахчьян, Санаин, М., 1973, էջ 36։

յությունների մեջ հաճախակի հիշատակվող բլավ, և վերեցավ, կոռծանեցավ բառերը չափազանցված են»[11]։

Պետք է նշել, որ Տաշիր—Զորագետի շրջանի միջին երկրաշարժայնությունը գնահատվում է 7 բալով, իսկ եթե հաշվի առնենք, որ Հաղբատավանքը գտնվում է ձորի եզրին, ապա հավանական է, որ նա կարող է ենթարկվել 8 բալից ավելի երկրաշարժի հարվածի։



Նկ. 5. Գլխավոր եկեղեցու և փոքր գավթի կտրվածքը հյուսիսից-հարավ։

Ս. Նշան եկեղեցու պատին կցված գավթի որմնասյուները կամարներով միացված են իրար և գավթի երկայնական պատերին ու իրենց վրա են վերցնում ծածկի քաշը։ Այդ անկյուններում, ինչպես ասվեց սկզբում, տեղադրված են երկհարկանի ավանդատներ, որոնք գրկելով եկեղեցին, կապված են երկայնական պատերին և գավթի արևելյան մասի կոնստրուկցիաներին ու կազմում են մի հզոր կոշտ հանգույց։ Կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց

11 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 26։

է տալիս, որ ավանդատները և գավիթը կազմում են մի ամբողջություն և կառուցվել են միաժամանակ։

Մի շարք հուշարձաններում, որտեղ գավիթը ավելի լայն է, քան եկեղեցին, կիրառված է կցման այս ձևը՝ կցման հանգույցը ուժեղացված է ավանդատների տեղադրումով։ Արղականի Նեղուցի վանքի ս. Աստվածածին եկեղեցու գավիթը՝ կառուցված 1271 թ., ընդգրկում է եկեղեցու արևմտյան պատը երկու ավանդատներով։ Նույնն է արված Գոշավանքում, Խորանաշատում, Մշկավանքում։ Մակարավանքի գավթի հյուսիսային պատը հենված է եկեղեցուն, իսկ հարավայինը, որ դրված է եկեղեցու պատից քիչ հեռու, անկյունում ուժեղացված է ավանդատնով։

Հաղբատի փոքր գավիթը, որ շինված է ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի և «Համազասպի տան» միջև, հետաքրքիր կառուցվածք ունի։ Մթնոլորտային տեղումների հեռացման խնդիրը թելադրել է այդ գավթի ոչ սիմետրիկ կառուցվածքային լուծումը։ Գավիթը ծածկված է թաղով, որը նրստում է ոչ սիմետրիկ կամարների վրա։ Վերջիններս հենվում են «Համազասպի տան» կողմից շինված ինքնուրույն պատի ցածր որմնասյուներին և եկեղեցու պատին ընդհուպ կցված կամարային որմնաիորշերով բարձր կառուցվածքին (նկ. 5)։

Հայկական գավիթների ճարտարապետությանը նվիրված իր մենագրությունում Ս. Մնացականյանը ի մի է բերում ուսումնասիրված գավիթների հորինվածքը և բաժանում դրանք մի քանի հիմնական տիպերի։ Մշկավանքի և Գանձասարի գավիթները, որոնց խաչաձևվող կամարներից երկուսը հենվում են արևմտյան կողմում դրված սյուների վրա, Հաղբատավանքի մեծ գավթի հետ դիտվում են իբրև մի տիպ։ Նմանությունն այստեղ միայն տիպային է։ Հաղբատավանքի մեծ գավիթը հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է, նա իր հորինվածքով տարբերվում է վերևում նշված և առհասարակ Հայաստանում կառուցված բոլոր գավիթներից։ Եթե ուշադրությամբ դիտենք մեզ հայտնի գավիթները, ապա կտեսնենք, որ գրեթե բոլորն էլ կցված են եկեղեցիներին արևմտյան կողմից, բայց իրենց կառուցվածքով անտարբեր են նրանց նկատմամբ, մինչդեռ Հաղբատավանքի գլխավոր գավիթը իր հորինվածքով կարծես եկեղեցու մի օրգանական մասն է կազմում։

Երբ մտնում ենք Հաղբատավանքի համալիրի կենտրոնական ս. Նշան եկեղեցու կողքին կառուցված համեստ ու գուսպ շենքը, մեր առաջ անսպասելի բացվում են մեծ գավթի վեր խոյացող և վերևում հատվող զույգ կամարները իրենց կմբեթով, որ բարձրում հենվելով եկեղեցու պատին, դիտողի ուշադրությունը գամում է տաճարի աստիճանավոր մուտքին։ Դրան նպաստում է գավթի երդիկից և Մարիամաշեն տապանատներից ներս թափանցող առատ լույսը։

Հաղբատավանքի մեծ գավիթը իր ճարտարապետական ու ճարտարագիտական հորինվածքով հատուկ տեղ է գրավում Հայաստանի հուշարձանների մեջ։ Այս կառուցվածքի հեղինակը բնածին տաղանդով ստեղծել է մի կատարյալ կոթող, որը հարատևել է մոտ ութ դար։

БОЛЬШОЙ ПРИТВОР АХПАТА

А. Г. САРКИСЯН

(Резюме)

Большой притвор Ахпатского монастыря пристроен к западной стене церкви с. Ншан. При этом использованы два концевых участка ранее построенного принцессой Мариам притвора.

Большой притвор в плане имеет прямоугольную форму (не считая отрезков притвора Мариам), вытянут с востока на запад, имеет размеры 15,3×16,9 м, окружен стенами, из которых восточная примыкает к стене церкви, а северная и южная соединяются со сводчатыми отрезками притвора Мариам. На расстоянии 4,30 м от западной стены имеются две колонны. Восточная сторона притвора, от колонн до стены церкви, перекрыта пересекающимися арками, а западная—обыкновенным арочным перекрытием. Пересекающиеся арки в центре образуют квадрат, который покрыт другими пересекающимися арками, создающими световой проем, над которым на шести колоннах устроен купол с конической кровлей. Мастер с большим искусством использовал существовавшие ранее сооружения: две арки, простирающиеся с севера на юг, опираются на приставленные к стенам притвора Мариам колонны и передают на эти стены свой распор. Две параллельные арки, перпендикулярные предыдущим, несимметричны, с западной стороны они опираются на колонны и свой распор передают жесткой системе колонна—покрытие—стена с пристенными колоннами, а с восточной стороны, на высоте 6 м от пола, —колоннам, пристроенным к стене церкви.

Притвор Ахпатского монастыря пристроен вплотную к стене церкви. Конструкции притвора, которые прислонены к стене церкви, недостаточно прочны и устойчивы и не могут существовать самостоятельно. Несмотря на это, мастер сумел создать достаточно сейсмостойкую конструкцию, поместив в углах притвора с двух сторон двухэтажные кельи, которые охватывают церковь и создают жесткие узлы.

Большой притвор Ахпата по своему архитектурному и инженерному решению занимает особое место среди однотипных памятников Армении. Талант и интуиция позволили автору создать совершенное творение, просуществовавшее уже восемь столетий.